



ՍԱՀՄԱՆՔ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ՝
ԳՐԵԱԼ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ, Ի ԽՆԴՐՈՑ
ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ ԷՄԱՆՈՒԷԼԻ

Խոստովանիմք՝ որպէս ուսաք ՚ի հարցն սրբոց, զՀօր յատկութիւն ա-
ռանձնաորութեանն՝ անծին և անսկիզբն. և զՈրդոյ ծնունդ անսկզբնականին
Հօր՝ անեղապէս և անժամանակ. և զՀոգոյ բխումն և ելումն և արտաքս ա-
ռաքումն ՚ի Հօրէ՝ անճառաբար:

Հայր ասի Հայրն՝ վասն պատճառ գոյոյն Որդոյ ծննդեան և Հոգոյն ե-
լողութեան. և Որդին՝ Որդի, ոչ յաղագս անստաւոր ինչ ծննդեան ըստ մի՞թա-
կանացս՝ որպէս կարծեն կոյրքն մտօք, այլ զի ՚ի բնութենէ Հօր՝ և ո՛չ արա-
րած է, սակայն յեղանակ ծննդեանն անհաս է յարարածոց: Կոչի և Միածին,
զի ոչ այլ ոք յառաջ քան զնա կամ յետ նորա՝ ծնունդ Հօր. ասի և Բան. քանզի
անախտաբար է ծնունդն, ըստ օրինակի մերոյս քանի՝ որ ծնանի ՚ի մտաց:

Եւ ոչ նախ Հայր և ապա Որդի, որպէս հոսանուտ և սերական բնութեանս
է օրէն. այլ որպէս յաւիտենական է Հայր, յաւիտենական է և Որդի ընդ յա-
ւիտենականին Հօր և մշտնջենաւորակից նմին ՚ի սկզբանն և կատարածին՝
ծագման արեգական նմանելով ճառագայթից: Զի որպէս ո՛չ նախ արեգակն
և ապա լոյս, այլ ՚ի միում ժամանակի երևին երկոքեան. այսպէս և լոյս Որդի
՚ի լուսոյ Հօրէ ծագեալ և ընդ նմին մշտնջենաւորեալ: Եւ որպէս ո՛չ արեգակն
առանց լուսոյ և ո՛չ պատկեր առանց նախաւոյի: Այնպէս և ո՛չ Հայր առանց
Որդոյ, և ո՛չ Որդի առանց Հօր, զի Նա է լոյս փնայաց և նկարագիր էութեան
Նորա. քանզի փառք է Հայր, և փառացն լոյս՝ Որդի, սկզբնաւորապէս Հայր, և
պատկեր աներևութիւն Աստուծոյ Հօր՝ Որդի. վասնորոյ՝ համազոյ և արարչա-
կից դաւանեմք զՈրդի՝ Հօր:

Խոստովանիմք և զՀոգին սուրբ ճշմարտապէս Հոգի Աստուծոյ, և ոչ
յաղագս համանունութեան՝ համեմատեմք զՆա արարածական հոգոց, որ-
պէս և ոչ զմին և զբնութեամբն Որդի՝ հաւասարեմք շնորհօք որդոց Աստու-
ծոյ: Քանզի Աստուծոյ անուանելովն հոգի՝ բաժանէ յեղականաց հոգոց:

Յստաջ եկեալ յանսկզբնականէն Հօրէ անսկզբնաբար անձնաւորութիւն կատարեալ, անիմանալի և անճառ յէիցս գոյով. ըստ էութեանն պատճառի՝ առ ՚ի Հօրէ միայնոյ, իսկ ըստ ունակութեան և շնորհաբաշխութեան հաւասարապէս Հօր և Որդոյ, ըստ ասելոյն Որդոյ յաղագս նորին Հոգւոյն. ոչ եթէ յանձնէ ինչ խօսի, այլ յիմե՛է անտի առնու և պատմէ, զի ամենայն՝ որ ինչ Հօր է՝ ասէ, իմ է. ո՛չ սկիզբն ունելով ժամանակի և ո՛չ փոփոխումն այլայլութեան՝ ըստ արարածոց. Քննող՝ անքննելի խորոցն Աստուծոյ, և Յայտնիչ՝ անլայտից խորհրդոց նորա. էակից Հօր և Որդոյ՝ ըստ մշտնջենաւորութեանն և փառակից և կցորդ արարչութեանն՝ ըստ համագօր և համապատիւ գոյոյն:

Խոստովանիմք և զերիս զայս անձնաւորութիւնս ՚ի մի աստուածութիւն ժողովեալ և միաւորեալ, ո՛չ յայլ և յայլ բնութիւնս բաժանեալս ՚ի միմեանց, ըստ Արիոսի՝ արարած և ժամանակ ՚ի ներքս մոծանելով, այլ մի բնութիւն, մի տէրութիւն, մի զօրութիւն, մի փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ հաւատացեալ ճանաչեմք: Եւ ո՛չ դարձեալ՝ հրեականին հետևողի Սաբելի լիբէացոյ ձայնակցելով՝ զերիսն ՚ի մի հաւաքել անձնաւորութիւնս, այլ բաժանեմք անբաժանաբար և միաւորեմք որոշմամբ՝ ըստ ուղղափառ հարցն դաւանութեան:

Քանզի երիս դաւանեմք զանձինս՝ և ո՛չ առաել կամ նուազ քան զերիսն, և բնութիւն մի՝ և ո՛չ յերիս բաժանեալս ըստ անձնաւորութեանցն. որպէս և ծանեաւ Եկեղեցի, ՚ի սերովբէիցն սրբաբանութեանց՝ զերիս սրբասացութիւնսն ՚ի մի հաւաքելոյ տէրութիւն և աստուածութիւն:

Եւ ո՛չ վասն զի Հայր անծին է և Որդի ծնունդ և Հոգին բխումն, զանազանին ՚ի միմեանց և բնութեամբ, որպէս և ո՛չ Ադամ և՛ Սէթ և՛ Եւայ. զի ոմն անծին է և ոմն ծնունդ, և միսն՝ թէպէտև ոչ ծնունդ, այլ յԱդամայ, բաժանին այսու ըստ բնութեան:

Ո՛չ ոմն յերից համապատուացն մե՛ծ ՚ի բնութենէ, քան ընդ որս կարգեցան. զի թէպէտև մեծ ասացաւ Հայր, յաղագս պատճառին է մեծ և ո՛չ վասն բնութեանն. քանզի բնութեամբ հաւասարակի՛ց է Որդոյ և Հոգոյ, և ո՛չ յառաջագոյն նուազ գոյով աստուածութիւնն Հօր և առ սակաւ սակաւ յետ ժամանակի եկեալ ՚ի յոռ՝մն. որպէս թէ՛ Էր երբեմն յորժամ ո՛չ Էր Հայր՝ ո՛չ ունելով զՈրդին, և ո՛չ իմաստուն՝ ո՛չ կրելով ՚ի ծոց իւր զիմաստութիւնն. և ո՛չ զօրսւոր՝ յաղագս ոչ լինելոյ ընդ Նմա զօրութեանն. քանզի Քրիստոս է Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն, ըստ առաքելոյ, և ո՛չ բանաւոր՝ եթէ ո՛չ Էր Բանն ՚ի սկզբանէ առ Աստուած, ըստ Յովհաննու. և ո՛չ ընդունակ կենդանութեան՝ եթէ Էր երբեմն յորժամ ո՛չ Էր առ Նմա Հոգին կենդանաբար:

Այլ է՝ Հայր՝ միշտ Հայր, անփոփոխելի ունելով յինքեան զԲանն և զօրութիւն և զիմաստութիւն և զկենդանութիւն. և Որդին՝ Որդի յաւիտեանական առ ՚ի Հօրէ և ընդ Հօր միշտ. և Հոգին սուրբ մշտնջենաւոր Հոգի Աստուծոյ և առ Աստուած:

Հայր պատճառ, և Որդի և Հոգի ՚ի պատճառէն անժամանակաբար և առանց պատճառի: Հայր ո՛չ սկսեալ յումեքէ. և Որդի և Հոգի սկսեալք ՚ի Հօրէ, այլ յառաջ քան զժամանակ և զբնութիւն արարիչ գոյով ընդ Հօր՝ ժամանակի և որոց ընդ ժամանակաւ իմանալի և զգալի արարածոց յանգոյից անեալք ՚ի գոյութիւն:

Խոստովանիմք զմի յերից անձնաւորութեանց Որդի կամաւ Հօր և Հոգւոյն՝ աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի իջեալ յերկիր՝ զոր արարն և ո՛ր Էրն միշտ և նախախնամէր, և մնացեալ աննուազ՝ ուստի Է՛ջն. բովանդակեցաւ յորովայնի Կուսին անբովանդակելին արարածոց, յորմէ առեալ զմերս

մեղանշական և ապականակիր բնութիւն՝ զնոգի և զմիտս և զմարմին. խառնեալ միացոյց ընդ անմեղ և անապական բնութեան իրոյ, և եղև նորօք մի և անբաժանելի, փոփոխելով ո՛չ զբնութիւն մարմնոյ յանմարմնութիւն, այլ զմեղանշական մարմինն յանմեղութիւն և զապականացուն յանապականութիւն և զմեղեալն յանմահութիւն՝ յորժամ կամեցաւ անփոփոխ 'ի միաւորութեանն պահելով զաստուծային և զմարդկային էութիւնն, ինճամսեայ ժամանակի յղացմամբ ծնեալ 'ի կուսէն, անխախտելի կուսութիւն ծնողին մնալով: Եւ նոյն ծնեալն 'ի Հօրէ անմարմնաբար՝ ծնաւ 'ի մօրէ ըստ մարմնոյ, և Որդին Աստուծոյ եղև որդի մարդոյ, ո՛չ ոմն Աստուծոյ Որդի, և ոմն՝ մարդոյ, զմին որդի յերկուս բաժանելով որդիս. ըստ հայհոյութեանն Նեստորի:

Քանզի Բանն ոչ 'ի մարմին բնակեցաւ, այլ թանճարացաւ 'ի մարմին. ո՛չ փոփոխմամբ, այլ միաւորութեամբ. և ո՛չ 'ի կուսին արգանտի արարչագործութեամբ թանճարացոյց Իւր մարմինն՝ ըստ չարափառաց ոմանց ասելոյ, այլ 'ի կուսէն ա՛ռ մարմին. ո՛չ օտար 'ի մմանէ, այլ 'ի նորին բնութեանէ. և ո՛չ առ աշօք իբրև ընդ խողովակ ինչ անցեալ՝ ըստ Ետիքեայ և համախոհից նորին. այլ ճշմարտապէս մարմին զգեցեալ 'ի զանգունածոյն Ադամայ՝ նոր խառնմամբ և սքանչելի խառնուածով. օրինակաց գերագոյն գոյով ամենայնի:

Քանզի և Արարչի ընդ արարածոյ ո՛չ եղև 'ի սկզբանէ խառնումն և միաւորութիւն, փոքր ինչ միայն և ո՛չ ամենայնի հոգոյ և մարմնոյ համեմատի շարախառնութեան՝ Աստուծոյ ընդ մարդոյ միաւորութիւնն, որպէս և Գրիգոր Նիսեայ 'ի բնութեանն գիրս 'ի բանն՝ որ յաղագս հոգոյ և մարմնոյ միաւորութեանն, ասէ. վկայէ այսոցիկ Պորփիրոս՝ հակառակ Քրիստոսի շարժող գիրն լեզու, վասնզի հզօրագոյնք են թշնամեաց վասն մեր վկայութիւնք, ո՛չ մի ինչ ունելով դիմաբանութիւն: Այս Պորփիրոս՝ ասէ, յերկրորդում բանին գրէ այսպէս. ո՛չ է ասելի թէ՛ էութեան իրիք անհնարին է լինել 'ի լրումն այլ էութեան, ընդ այլում լինել և գիրն ամբողջ պահելով՝ զմեծագունութիւնն իւր ո՛չ փոփոխելով, այլ փոփոխելով զնա մերձաւորութեամբն յիւր ներգործութիւնն: Եւ ասէ զայս վասն միաւորութեանն հոգոյ և մարմնոյ. իսկ եթէ 'ի վերայ հոգոյ յաղագս անմարմնութեանն ճշմարիտ է բանաւ, որչափ ևս առաւել 'ի վերայ Բանին Աստուծոյ՝ յաւետ անբաղդատաբար և ըստ ճշմարտութեան անմարմնոյն:

Եւ մեր այսոցիկ համաձայնեալ հաւատամբ, եթէ Բանն որ եղև մարմին՝ ըստ Յովհաննու, ո՛չ 'ի մարմին փոխեցաւ գիրն կորուսանելով բնութիւն, այլ ընդ մարմնոյ միացեալ՝ եղև մարմին ճշմարտապէս, և մնաց անմարմին՝ որպէս է՛րն 'ի սկզբանէ. ո՛չ այլ ոմն մարմին և այլ ոմն անմարմին, այլ մի և նոյն Քրիստոս է՛ մարմին, և է՛ անմարմին, մարմին՝ ըստ մարդկութեանս գոր առ, և անմարմին՝ ըստ աստուածութեանն գոր ունէր: Եւ նոյն տեսանելի և անտեսանելի, շօշափելի և անշօշափելի, ժամանակեայ և առանց ժամանակի. որդի մարդոյ և Որդի Աստուծոյ, համագոյ Հօր ըստ աստուածութեանն և համագոյ մեզ ըստ մարդկութեանս: Ո՛չ ոմն և ոմն այնոքիկ, այլ մի էութիւն և միանճնաւորութիւն՝ 'ի յերկուց բնութեանց՝ 'ի մի Քրիստոս միացելոց անշփոթելի և անբաժանելի միաւորութեամբ:

Եւ թէպէտև մարդկային միտք տկարանան յայսոսիկ, զի 'ի վեր է քան զբնութիւն, այլ աստուծային զօրութեանն ոչինչ է անկարելի. զի թէ հոգի և մարմին արարած գոյով Աստուծոյ՝ կարէ լինել յերկուց հակառակացն մի բնութիւն, և ոչ մի 'ի նոցանէ կորուսանէ գիրն էութիւն 'ի միութեանն, քանի՞ արդեօք է կար և հնար ամենագօր բնութեանն Աստուծոյ լինել մարմին և մնալ

անմարմին, խառնիլ ընդ եղականի մարդոյս բնութեան և պահել անփոփոխ զանեղական բնութիւն որ 'ի Հօրէ:

Եւ որպէս խոստովանիմք յերկուց բնութեանց մի լեալ, և 'ի միաւորութեանն ո՛չ կորուսեալ զմի ոք 'ի յերկոցո՜ցն. այսպէս և զկամսն ո՛չ այլ և այլ ասեմք, որպէս թէ աստուածային կամքն հակառակ լինել մարդկայնոյն կամաց, և կամ մարդկայինն՝ աստուածայնոյն. այլ 'ի միոյ էութենէն կրկին եղելոյ: Կամաց՝ ըստ այլ և այլ ժամանակի, երբեմն աստուածային՝ յորժամ զաստուածութեանն կամէր ցուցանել զգործութիւն, և երբեմն մարդկային՝ յորժամ զմարդկութեանն կամէր յայտնել զխոնարհութիւն: Եւ այս ո՛չ հակառակութեան, այլ անձնիշխանութեան են ցոյցք. զի ո՛չ եթէ մարդկային կամքն զաստուածայինն բռնադատէր՝ որպէս և 'ի մեզ, զի կամք մարմնոյն ցանկալ հակառակ հոգւոյն, այլ մարդկայինն՝ աստուածայնոյն հետեւիր կամաց. զի յորժամ կամէր և թո՛յլ տայր, յայնժամ զիրան կրէր մարմինն, որպէս և 'ի փորձութեանն՝ յետ քառասնօրեայ պահոցն լրման, ապա կամեցաւ թո՛յլ տալ բնութեան մարմնոյն՝ քաղցնուլ: Զի թէպէտև ա՛յլ ասաց զկամս Հօրն և ա՛յլ զի՛րն՝ ըստ ասացելոյն, ո՛չ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու, համակամութեան է այս ցոյցք՝ որպէս որդոյ առ Հայր, և ո՛չ հակառակութեան. զոր յա՛յտ առնէ և յայլում վայրի վասն յատուկ աստուածութեանն և ոչ վասն մարմնատրութեանն. իջի ես յերկնից, ո՛չ զի զկամս իմ արարից, այլ զկամս հօր իմոյ. և իջեալ յերկնից, յա՛յտ է թէ՛ անմարմին աստուածութիւնն էր, և ո՛չ մարմին՝ զոր ա՛ռ յետ իջանելոյն յերկիր:

Եւ ըստ աստուածութեանն՝ զհա՛րոյ համարձակի ոք բաժանել զկամս որդոյ 'ի հօրէ և ո՛ր են կամք Հօրն՝ ինքն ցուցանէ Որդին. այս են կամք Հօր իմոյ՝ ասէ, զի ամենայնի՝ որ հաւատայ յիս, տաց զկեանսն յաիտենից: Արդ՝ հօր կամք են տալ հաւատացելոցն Որդի զկեանս, և Որդոյ չե՛ն կամք. այսոքիկ մանաւանդ զհամակամութիւնն և ո՛չ զընդդիմադրութիւնն ցո՛ցանէ՝ ըստ աստուածաբանին Գրիգորի. քանզի յասելն՝ ասէ, որդոյ առ Հայր՝ եթէ ո՛չ իմ կամքս եղիցի, այլ քոյդ, որ է ի՛մս. յայտ արար թէ՛ իւր և Հօրն մի են կամք: Զի թէ ամենայն որ ինչ Հօր է, Որդոյ է, և որ ինչ Որդոյ՝ Հօր. յայտ է թէ՛ և կամքն Հօր՝ կամք են Որդոյ, և կամք Որդոյ՝ կամք Հօր:

Ըստ կամացս օրինակի զոր ասացաքս, 'ի միոյ անձնիշխան կամաց աստուածութեանն՝ երկուց լինել անհակառակաբար աստուածայինն և մարդկայինն: Հաւատամք և ներգործութեանն նոյնպէս լինել՝ աստուածայնոյն և մարդկայնոյն 'ի միատրութեան անդ, ո՛չ զբարձրագոյնսն՝ աստուածութեանն միայն տալով առանց մարմնոյն, և ո՛չ զխոնարհագոյնսն՝ մարդկութեանն առանձինն առանց աստուածայնոյն. զի թէ այսպէս ո՛չ էր, զհա՛րոյ ասիւր՝ Որդին մարդոյ յերկնից իջեալ, կամ Աստուած խաչեալ, և արիւն Աստուծոյ լեալ: Այլ միոյ անձնատրութեան զերկուսին զայսոսիկ խոստովանիմք, երբեմն որպէս զԱստուած՝ զաստուածայինսն ներգործելով, և երբեմն որպէս զմարդ՝ զմարդկայինսն. զոր յայտ առնեն՝ և տնօրէնութեան նորա գործք 'ի սկզբունէն մինչ և ցկատարումն:

Քանզի թէ յղացաւ որպէս զմարդ, այլ 'ի Հոգւոյն սրբոյ՝ որպէս զԱստուած: Ծնաւ 'ի կնոջէ՛ որպէս զմարդ, այլ 'ի կուսէ՛ և զկուսութիւն ծնողին անպական պահելով յետ ծննդեանն՝ որպէս զԱստուած: Թշխատեցաւ ութօրեայ՝ որպէս զմարդ, և երարձ զթշխատութիւն մարմնոյ և ուսոյց զթշխատութիւն սրտի՝ որպէս զօրէնսդիր թշխատութեանն: Ընծայեցաւ քառասնօրեայ 'ի տաճարն՝ որպէս զմարդ, և վկայեցաւ 'ի Սիմէօնէ՛ որպէս զԱստուած արձա-

կող կապելոց: Փախեալ ի Հերոդէ՝ որպէս զմարդ, և փախոյց զմոլորութիւն կոտնն յեգիպտոսէ՝ որպէս զԱստուած:

Մկրտեցաւ ի Յովհաննէ՝ որպէս զմարդ, այլ զմեղս Ադամայ լուսց մկրտութեամբն, և ի Հօրէ և ի Հոգւոյն վկայեցաւ՝ որպէս զԱստուած: Փորձեցաւ նոր Ադամս որպէս զհինն, և յաղթեաց փորձողին որպէս զստեղծիչ Ադամայ, և ետ իշխանութիւն որդոց Ադամայ որպէս զԱստուած՝ կոխել զգօրութիւն թշնամոյն: Քաղցեալ որպէս զմարդ, և զքիւս կերակրեաց ի սակաւ հացից որպէս զԱստուած: Ծարաւեցաւ որպէս զմարդ, և զծարաւիս կոշեաց առ ինքն արքունցանել զգորն կենաց որպէս զԱստուած: Վաստակեցաւ ի ճանապարհն՝ որպէս զմարդ, այլ հանգիստ եղև աշխատելոց և ծանրաբեռանց մեղօք՝ քաղցր լծովն և փոքրոգի բեռամբն որպէս զԱստուած: Ննջեաց ի նախն որպէս զմարդ, և գնաց ի վերայ խորոցն և սաստեաց հողմոյն և ծովուն՝ որպէս զԱստուած: Ետ հարկս որպէս զմարդ, այլ ի բերանոյ ձկան նորաստեղծ սատերս՝ որպէս զԱստուած:

Աղօթէր ընդ մեր և վասն մեր որպէս զմարդ, և ընդունէր ընդ Հօր ի:րում զաղօթս ամենեցուն որպէս զԱստուած: Արտասուէր վասն սիրելոյն որպէս զմարդ, և դադարեցուցանէր զարտասուս քերցն՝ յարութեամբ եղբօրն որպէս զԱստուած: Հարցանէր՝ ո՞ր եղիք զՂազարոս որպէս զմարդ, և յարուցանէր ձայնի զչորեքօրեայ մեռեալն որպէս զԱստուած:

Վաճառեցաւ դիրազին որպէս զմարդ, և գնեաց զաշխարհ մեծագնի իւրով արեամբն՝ որպէս զԱստուած: Եղև անխօս որպէս զորոջ առաջի կտրչի՝ ըստ մարդկային բնութեանն, այլ Բա՛ն է Աստուծոյ ի սկզբանէ, որով երկինք հաստատեցան՝ ըստ աստուածային բնութեանն: Բնեռեցաւ ի փայտի ընդ առազակսն որպէս զմարդ, այլ զլուսաւորսն խաւրեցուցանէր և զաւազակն ի դրախտն մոծանէր որպէս զԱստուած: Քացախ արբ և լեղեալ կերակրեցաւ որպէս զմարդ, այլ զգորն ի գինի փոխեաց և դառնութեան ճաշակացն եղև քաղցրացուցիչ որպէս զԱստուած: Մեռաւ մարդկային բնութեամբն՝ որպէս զմարդ, և զմեռեալս յարուցանէր աստուածային զօրութեամբն՝ որպէս զԱստուած:

Ծաշակեաց ի մահուանէ մարմնով որքան ինքն կամեցաւ որպէս զմարդ, և ելոյժ մահուամբն զմահ որպէս զԱստուած: Ո՛չ ոմն մեռեալ և ոմն լուծիչ մահու, այլ ինքն մեռեալ և ինքն կենդանի և կենդանարա՛ր մեռելոց. քանզի մի և նոյն Քրիստոս՝ մարդ գոյով բնութեամբ մահկանացու, և Աստուած գոյով բնութեամբ անմահ: Ո՛չ ի յերկուս բաժանեալ զառ ի յերկուց միացեալ բնութիւնսն, որպէս թէ ոմն չարչարելի և մեռեալ և ոմն անչարչարելի և անմահ, այլ միաւորեալն յերկուց ընդդիմակացն և մի լեալն՝ կրէր զերկաքանչիւր հակառակացն զկիրս մարդկային բնութեամբն զչարչարանս և զմահ, և աստուածային բնութեամբն զանչարչարութիւն և զանմահութիւն: Զի՛ նա՛ որ մեռեալն եղև մարմնովն, նո՛յն կենդանի էր աստուածութեամբն, և որ չարչարեալ, նո՛յն էր և անչարչարելի. և որ քրտնեաց յերկիւղէ, նո՛յն ընկրկեաց և զարո՛ցեալսն ի վերայ. և որ փո՛քր մի քան զհրեշտակս խոնարհեալ՝ զօրացաւ ի հրեշտակաց, զօրացուցանէ զարարածս ամենայն. և որ Արարիչ գոյով էիցս՝ ըստ աստուածութեանն ընդ Հօր. նո՛յն արարած յաղագս մարդկութեանն ընդ մեզ. զոր և քարոզիչք Բանին քարոզեն՝ Աստուած և մարդ կատարեալ, զերաւո՛րն ի միութեամբ միաւորեալ՝ քան զհոգի և զմարմին: Զի մարդկայինն ոգի ի ձեռս հօր ա՛ւանդեալ՝ բաժանեցաւ ի մարմնոյն, բայց աստուածութիւնն անբաժանելի մնաց յերկոցունցն. քանզի էր միացեալ ընդ բանականի հոգւոյն՝

յորժամ էջ առ հոգիսն՝ որ ի դժոխս, և էր անմեկնելի ի մեռեալ մարմնոյն՝ որ ի գերեզմանի անդ, ո՛չ մասնատրաբար, այլ բոլորն առ երկոսեան:

Վասն զի նոյն՝ որ ի ծոց Հօր և յորովայնի Կուսին, յաթոռ փառաց և ի մտոր, ընդ աջմէ Հօր և ի խաչին, ի քօթէս և ի գերեզմանի, զի լի են երկինք և երկիր փառօք նորա, յարոցեալ յերրորդ աւոր յարութիւն մեր և կեանք, ել յերկինս՝ ուստի ոչ երբեք պակասեաց:

Եւ գայ դարձեալ միասնգամ՝ յարուցանել ի մեռելոց զքնութիւնս Ադամայ և դատել արդարապէս զկենդանիս և զմեռեալս՝ ըստ հաւատոց և խորհրդոց և բանից և գործոց. բարեացն եղելոց՝ զբարին փոխատրելով հատուցումն, իսկ չարեացն՝ զվնիռ դատաստանի տանջանացն:

Եւ ինքն թագաորեսցէ ընդ նմին թագատրեցելովքն յանկէտ և յանվայսնան յաիտենին, ծանուցեալ յայնժամ կատարելապէս՝ զոր այժմ չափատրապէս ընկալաք զգիտութիւն հաւատոց՝ որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, որում փառք և զօրութիւն յաիտեանս. Ամէն:

«Թուղթք միաբանութեան գրեալ առ Յոյնս՝ վասն Սիութեան եկեղեցւոյ», 1865, ի ս. Էջմիածին, էջ 163—176):

